


THE DICKRIS PUBLISHING CO. NEW YORK CITY.



ՏԻՊՈՒՄ ՍԻՆՏԱԿՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՒՆ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 57 ՆԻՒ ԵՈՐԳ, ՇԱՐԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 10 1898 ԳԻՆ 3 ՍԷՆԹ



ՁԵՅՈՒՆԻ ՍԻՆՏԱԿԸ ՄԵՐ ՄԵՍ ՀԱՆԴԵՍԸ

Բարձրաբար նպատակաւոր Յանձնախումբի և անոր նոր օժանդակներու ծրարանութիւնն ինկատի առնելով կրնանք վստահարար ըսել թէ յառաջիկայ Շարաթ Երեկոյան մեծ հանդէսը, որ տեղի պիտի ունենայ Հոգևորական Ընթացիկ Րայթ Հոլ Ժողովարանին մէջ, յայտուածներ պիտի պատկէ այն բարեգործական նպատակը որ շարժած է այսօր Ամերիկայի բոլոր Հայ գաղութներն: Պատրաստուած ճիշտ յայտագիրն, որ լայն պիտի տեսնէ այս օրեր կը պարունակէ 15 է աւելի ընտիր կտորներ, որոց մէջ մասնաւոր ուղարկութեան արժանի են Օր. Պօզէի երգերը երկու Հայերէն երգերն՝ «Իմ սիրելի գաւառիս» և «Իմ Հայրենիք զիս կը կանչէ»: Մեր թիկնաբաններէ սմանք կը յիշեն անշուշտ թէ այս օրերորդի կողմէ երգուած յիշեալ Հայկական երգերն 1896ին ինչ մեծ ոգևորութիւն ու տպաւորութիւն թողցին թէ՛ Հայ և թէ՛ ամերիկացի ունեւորներու վրայ ի Ձիբէրին Հօլ:

Օր. Քօզէնձա, տեղացի բարեկեցիկ ու բարձրագոյն դասի մէջ մեծ համբաւ ունեցող դաշնակահարը, յանձն առած է նաև նուագել այս հանդիսի մէջ: Մեր Հայրենակիցք, որք պատեհութիւն չունին ընդհանրապէս այլուր այսպիսի նշանաւոր արուեստագէտ մը լսել, այս հանդիսի մէջ առիթ պիտի ունենան ունեւորները անոր նուագածութեանն օգնելով միանգամայն Ձէյթունի աղբատներուն:

Այս օրերուն որք Հայ շին ազգաւ, յանձն առած են մարդասիրարար ծառայել այս մեծ նպատակին, որ սակայն շարժած չէ մեր Հայրենակիցներէ շատեր...: Ընթացիկ Րայթ Հօլի օթեակներէն մի քանիներն ալ վաճառուեցան շարժուած մէջ: Կրկնակներն ալ մինչև գալող շարժու վաճառուած կըլլան անշուշտ: Կը ցաւինք ըսել սակայն թէ Տ. Կրկնակներն, որ այսօրինակ բարեգործական ձեռնարկութեանց օգնելու աւանդական համբաւ ունին, այս անգամ իրեն զբոհուած մէջ օթեակի տամը մերժելով ետ դարձուցած է յանձնախումբի Գանձապետին: Տ. Կ. Կրկնակներն այս օրինակին հետեւած է նաև Տ. Իւզիկեան, մերժելով ընդունիլ իրեն զբոհուած օթեակի տամակն: Այս միջոցէ պէս ի Հարկէ շին յուսահատեցներ Յանձնախումբը, զի օթեակներն քիչ են թուով եղած պահանջը լեցնելու համար:

—Օթեակ զնոյններու անուններն պիտի հրատարակենք յաջորդ թուով:

—Յանձնախումբի առնապետն ըստացած է բաւական թուով նուէրներ, որոց մէջ նշանաւոր տեղ մը կը բռնէ այժմ ազգային նկարիչ Տ. Տիրանեանի մէջ ընտիր նկարը:

—Ուղարկելով Տ. Ա. Կ. Յովսէփեան մեզ յղած է 5 տարի ի նըպատ Ձէյթունի: Այս գրամին 3 տարի Տ. Յովսէփեան ինք տուած է, իսկ մնացածը հանգանակած է երկու օրիչ Հայերէ:

—Ձէյթունի քաղաքին Յանձնախումբին օժանդակներն են Տիրաք Պ. Իսպիրեան, Լէմուէլ Գառնիկեան, Յակոբ Ազատեան, Ա. Գրգորյան, Թ. Պարտիզպանեան, Մ. Թաշճեան, Սարգիս Յովսէփեան ևն:

—Լինի Յանձնախումբը որոշած է իր արամագրութեան տակ ունեցած Հարիւր տարի շափ դրամը դրամատան մը մէջ ի պահ դնել մինչև որ որոշուի և իրեն տեղեկագրուի թէ ինչ կերպով ստակներն պիտի ղրկուին Ձէյթուն: (.)

—Ընդհանուր Գանձապետը ընամ է մինչև Հիմայ:

Table with 2 columns: Item description and Amount. Includes 'Մանուցեալ Գումար \$363.92', 'Նիւպորտիփօրթի Յանձնախումբին 10.50', 'Նիւ Պրիթլենք Յանձնախումբին 100.00', 'Գումար \$474.42'.

Իւր հասցէն է MR. H. TAVSHANJIAN, 343 B'WAY, NEW YORK CITY

Պ. ՁԻԹՃԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Հայ Դաշնակցութեան կեդրօնական կոմիտէի վերջի բաց նամակին, որ հրատարակուեցաւ ՏԻՊՈՒՄԻ անցեալ թուոյն մէջ, ընդարձակ պատասխան մը ստացած ենք Տ. Ձիթճեանէ: Տեղւոյ անձկութեան պատճառաւ անոր հրատարակութիւնն զանց կ'առնենք այս շաբթու, բայց կը խօսապանանք անոր համառօտութիւնն հրատարակել զալ թուով՝ սա հասկացողութեամբ որ այդ խնդիր նոյն նամակաւ մի անգամ ընդ միշտ գոցուած պիտի համարինք:

ԱՂՍՏ ԼՍԱՐԱՆ

Ձիթճեանի Բօրնըր Հօլ, Թիւ 57 Ուէսթ 25րդ փողոց: Այս կիրակի երեկոյ, ժամը ճիշդ 8ին ձիթի խօսին Տիրաք Մ. Մարգարեան և Յ. Էրկանեան. այս վերջնոյ նիւթն է «Միացեալ Նահանգաց ծովային զօրութիւնն և իմ փորձառութիւնս վերջի պատերազմին մէջ»:

Պիտի երգուին երգեր ու հաւանականաբար հակաճառութիւն մ'ալ պիտի ըլլայ:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Վանէն ա'լ լուր չ'եկաւ: Շատեր մխիթարանքի և բարութեան նշաններ կը տեսնեն յուրի ուշանալուն մէջ: Կոտորած չ'է եղած, լուրը բարի է, հետեւաբար կամաց կամաց կուգայ անիկայ: Սև խապրիկն է որ կայծակէն արագ կուգայ արտերն շանթահարելու: Բայց Վանի կոտորածի բոթն շատ ալ չը խշխշացուց մեր սրտերն, և այս անընական ալ չէ. սիրտ մը որ բազում վէրքերով ծածկուած է, անոր վրայ վէրքի մըն ալ բացումն ցաւին սաստկութիւնը չաւելցնիր:

Կոտորածներու աղետար Նկարագրութիւններու վարժուած, պաշարիւնութիւնով մը լեցնելը կոտորածի մը լոկ լուրը:

Մասկեր դազաններու վախճանը մօտ է երբ կ'ըստին իրարու միս ուտել: Երբ լուր պալատականներուն վտճակը, Կ. Պօլէ հեռագիրներ կ'ըսեն, գազանակաւ հրամանով, յօշոտած է նախորդ եպարքոս և կրէտէի վերջին կոտորածի ձեւատ փաշան, որ հազիւ վերագրած էր Գերման կայսրն հետ իբր հիւրընկալ ճամբորդելէն:

Սուլթանը, պալատականները և սօֆիստները կը հաւատան թէ չ'ընտիր կեալուներուն յանձնուելուն պատճառը անոր կառավարիչն եղած էր: Այսպէս շարունակուի, լաւ է. քիչ ատենէն թուրք երիտասարդութիւնն ալ վեհապետը և փաշաները պիտի պատանեն, որովհետեւ իրենք ամենքն են Օսմ կայսրութեան քայքայուելու պատճառները:

Անգղիական Ռեզիլ օֆ Ռեզիլսի խմբագրը, Ռիլիքմ Սթիւարտ, որ Անգղիոյ ամենէն նշանաւոր խմբագրներէն մէկն է, այս օրերս Պօլիս է: Նիւ Եորքի Թայմըզը անոր մէջ յօդուածին ամփոփումը կը հրատարակէ, որուն մէջ Սթիւարտի մէջ այլոց ցոյց կուտայ Կ. Պօլսոյ Բօլթաթ զօլէճի կատարած ահագին դերը Պուլկարիոյ ազատութեան համար, «Պուլկարիոյ իշխանութիւնը Պուլկարիոյ յեղափոխութիւնը, թէև ձեռք բերուեցաւ Ռուսիոյ սուրովը, բայց կը պարտին Բօլթաթ զօլէճին»:

Մեծ խմբագիրը կ'ըսէ թէ Բօլթաթէն ընթացաւարտ Պուլկար երիտասարդութիւնը եղաւ Պուլկարիոյ ազատողը, ու կը հաւատայ թէ անկէ եւնող Հայ ուսանողներն ալ մեծ դեր ունեցած են և ունին Հայ յեղափոխութեան մէջ:

Յօդուածի վերջաբանին մէջ Ըսթիւարտ կ'ըսէ.

«Ինչ որ Պուլկարները ըրած էին, անոնք—Բօլթաթի ընթացաւարտ Հայերը—կարծեցին Հայերն ալ կրնային ընել»:

«Որովհետեւ Բօլթաթ զօլէճի ընթացաւարտ Պուլկարները անկախ Պուլկարիա մը ստեղծած էին, իրենք ալ իրենց կարգին ուղեցին ցոյց տալ

թէ իրենք ալ կրնային անկախ Հայաստան մը ստեղծել, ու այսպէս սկսան գործել: Բայց աւա՛ղ, թէև իրենք գործին իրենց մասը քաջութեամբ կատարեցին, բայց Ռուսիա աս անգամ իրենց փրկութեանը գալու արամագրը չէր: Այսպէս Սուլթանը՝ կատարած՝ ընկաւ անոնց վրայ ու յանձնեց զանոնք պաշարուածներու և քիւրտներուն. ինչ որ հետեւեցաւ՝ հօտի և արիւնի առեւտրով գրուած է Արեւելի վերջին պատմութեան մէջ»:

Այ՛ո, Հայ երիտասարդութիւնը, ո՛չ թէ միայն Բօլթաթի ուսանողները, կատարեցին ու պիտի կատարեն իրենց գործը ահագին զոհողութիւններով և քաջութիւններով, ինչպէս որ Սթիւարտ պէս հանրածանօթ և անկող մտակալ օրհնական մ'իսկ կը յայտարարէ. Հայութեան այդ ոչ երիտասարդ և ոչ-ուսանող մեծ ու անտարբեր դասակարգն ալ ե՛րբ պիտի սկսի կատարել իւր պարտն ալ:

Մեր հարուստները, մեր անտարբերները զանգուածը: Թ. Չ.

ԴԱՏ ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԳՐԱՑ ՄԷՁ

Ամիսներ առաջ Վառնայի «Շարժում»-ը «Հայ Դաւանան մը» վերնագրով կծու յօդուած մը հրատարակեց, որով Տարաթի խմբագիրը՝ Տ. Չաքրեան և Ա. Ճգնաւորեան շարաչար կ'ամբաստանուէին: Այս յօդուածի հրատարակութեան վերջ, ամբաստանեալը դաս բացին Շարժումի արտոնատիրոջ՝ Պ. Ղ. Թահմազիանի դէմ, որ թէև ուղղակի պատասխանատու չէր «Դաւանան մը» յօդուածին, բայց թեթիւն արտոնատէրը լինելով՝ օրէնքի առջև պատասխանատու միակ անձը կը նկատուէր:

Այս դատը, երկար տեսն վիճարանութեանց նիւթ լինել վերջ, անցեալները տեսնուեցաւ Վառնայի մէջ դատարանին առջև, ուր պէտք եղած ընտելութիւններն կատարուելէ յետոյ, Շարժումի նախկին արտոնատէրն յանցաւոր սեպուելով՝ 20 Փրանք տուգանքի և երկու օր բանտարկութեան դատապարտուեցաւ: Վճիռը արձակուելէ վերջ Տիրաք Ճգնաւորեան և Չաքրեան ներած են Տ. Թահմազիանի, որ բարոյապէս պատասխանատու չէր Շարժումի Հայ Դաւանան մը յօդուածին:

ՈՒՆԵՍԻ ԶՊՈՒՐԸՆԻ ԵՈՐ ՔԱՐՈՁԻՁԸ

Ուէսթ Հոպրընի մէջ Հաստատուող Թումայեան անուն այն քարոզիչ պատուելին, որուն համար քանիցս գրուած է այս սիւններու մէջ, Հայրենիք գնացած ըլլալով, իր թափուր թողուցած աթոռին արժանաւոր յաջորդ մը ընտրուած է այս օրեր յանձին Պ. Ռ. Թորոսեանի:



ՀԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի մինչև Եսթրախ օրեր,

ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Բնկերութեան կողմանէ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՈՐԱՅԵՆԱԿ ԵՒ ԱՆՎՈՐՈՒՄ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ

Տղ. Սթ.	Տարեկան	10 Փրանք.
Տարեկան	1 50	
Վեցամսեայ	75	Բաժանորդ ողորմէն ԿԱՆՈՒԿ
Նամակեայ	40	Վճարելի է միշտ:

Ծրար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին:

To the DICKRIS PUBLISHING CO., 145 East 23d St., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԲ, ՀԱՐԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 10 1898.

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Իբրև Առեւտրային Հայեր, մեծ սխալ մը ունիմք. շարժանքներու միտումն է այն: Ամէն բանի մէջ ծայրայեղութեան կը դիմենք. երբ անձի մը սիրտը բարի գտնեմք. այլ ևս կ'առտուածացնեմք զայն, անոր վերաբերելով միշտ ինչ, իմաստութիւն, կարողութիւն, այժ, գիտութիւն և մինչև իսկ մտացածին և գերբնական ձիրքեր: Ասոր հակառակ երբ մէկի մը վրայ փոքրիկ յանցանք մը տեսնեմք, այդ կը բաւէ զայն հրէջ մը շինելու:

Ահա այս երկուքն է որ տեղի ունեցաւ և կ'ունենայ Հայրիկի շուրջը: Հրապարակելով անոր բարի և գթոտ սքերտէն, տեսնելով անոր հայրենասիրական եռանդը—տանայ տրամարանելու—վճռեցինք. «Հայրիկն էր ամենայն յամենայն»: Մեր կղերականաց մէջ անգուգական է Հայոց Հայրիկն իր սրտի ազնուութեամբ:

Եւ մեք մոռնալով թէ զօրաւոր կամքն և ճարպիկ քաղաքական դարձածներ են որ կը կառավարեն այսօրուայ աշխարհն և ո՛չ թէ բարութիւն ու ազնուութիւն, Հայրիկն Լուսաւորչի ոթոսին վրայ լաղ մեղացիք մեծ յոյսերով...: Խորհրդանք թէ անոր ազգասիրութիւնը կը բաւէր մեղ փրկելու: Չարաշար խարուեցանք, վասն զի Հայրիկի ազգասիրութիւնը Ռուսիայ ճնշող քաղաքականութեան մէջ վանդակուեցաւ իր ազնիւ սրտովն:

Անձամբ մեք զմեզ յուսաբարութեան մղկեցինք, և վասն այն է որ այս օր ալ ելեր մեզնի մէկս ձայն մը կը հանենք: Ոմանք անպայման պաշտպան կը կանգնին, նոյն իսկ Հայրիկի սխալանաց, և տակուին մեզ կ'ուզեն համոզել թէ Հայրիկն ամենակարող է, անխալ և հրաշքներ պիտի գործէ:

Ասոր հակապատկեր՝ սեանք ալ Հայրիկի արժանիքն իսպառ կ'ուրանան, բարոյութիւն անկարող մէկը կը ներկայացընեն զայն: Այս կարգէն է Մանչէսթըր հրատարակուող «Վարդան» ձայնը թերթը, որ երէկի ձայնէն աւելի խռպտու է:

«Կուռք մը» խորագրով և Պարթեւեան ստորագրութեամբ յօդուած մը կար այդ թերթի թիւ 2 ի մէջ: Պ. Պարթեւեան գաճաճ գրող մը Հայրիկն «անգրագէտ», Հայրիկի անտեղեակ կը կոչէ: Անոր խօսքով Հայրիկի Հայրիկը վարագայ վանքին անպատուութիւն կը բերէ եղբւր. և թէ Պարթեւեան հակառակ իր հայրենասիրութեան, որ իրեն պէս պարթեւ ըլլալու է անտարակոյս, չ'է կրցեր Խաչի ճառի, Հայ Գուժի և վան գուժի երկրորդ երեսներն դարձունել, առաջին երեսներն ալ համ, կամ լաւ ևս է ըսել, մաքուր Հայերէնով շ'գրուած ըլլալուն համար: Այս սրտալ և անտեղի քննադատութիւնը Պ. Պարթեւեան կ'ընէ, վասն զի Հայրիկի քաղաքական ճարպիկութիւնը չի համարաւորաններ մեր ներկայ պահանջին: Ինչ հարկ կայ ուրանալ Հայրիկի գրական արժանիքը, անոր անքաղաքագէտ ըլլալը հաստատելու համար: Մայրաքաղաքութիւն է այս ալ:

Այս երկու ծայրայեղութեանց մէջ միջին դասակարգ մ'ալ կայ, որ Հայրիկի սխալները մատնանիչ կ'ընէ ո՛չ թէ դատաւիտելու տենչանքէն մղուած, այլ սպառնացող վտանգին առաջն առնելու համար: Այս կարգին վերաբերած են ՏԻԳՐԻՍ և Եսթրախի խմբագիրները:

Ճանչնանք և ըմբռնենք սխալը և րոյց շ'անտեսենք արժանիքը. քննադատենք ուղղելու և ո՛չ թէ տապալելու գիտումով:

Պոսթոն Նոյ. 27.

ԱՊՏԱԿ

ԿՈՆԳՐԱՏ Մ'ԱԿ ՊՕՍԹՈՆԷՆ

ՏԻԳՐԻՍԻ վերջին թիւը կարգացի. Հայ Կրօնաւորը որքան արագաշարժ է երբ հարուստին ծառայելու պարագայն կ'ուզայ: Լաւ չ'է որ հայերը Եսթրախին դիմեն որ աւելի արագընթաց շուկեալք մը կամ ելեքարտական օգտնաւ մը հնարէ Սրբազանը հոս ու հոն փոխադրելու. հոս Բէյմպրիճի մէջ գաւազնեւորութիւն, 20 տարիէ ի վեր ամուսնացեալ Հայ մը իր կինը ձգեր է, չ'ուզեր հետը ապրիլ. նամակով Եսթրախու գիտուած է, ինքրեւ լի մը հոս գայ, կարգադրութիւն մ'ընէ. սակայն սպասեցէ՛ք պատասխանի մինչև ի գալուստ Տեառն մերոյ Յիսուսի Բրիտանի: Կինը տղքատ է, ինչպէս նաև իր բարեկամները. ինչ մեծ ոճիր է աղքատութիւնը...

Կ'երեկ թէ Սրբազանը իր հօտին գեր եւ կաթոտ ոչխարներուն միայն հոգ տանիլ կ'ուզէ, իսկ նիհարները—գայլը թող տանի:

Յայտնի է սակայն թէ քանի որ խնդիրը ճշտակի վրայ է, ՏԻԳՐԻՍԻն պոռոզուած անօգուտ և աւելորդ է. Հայրիկին գրելու է, (Ամերիկայի մէջ ընտրութիւն ընել աւելորդ է, այդ թարբերոյ նման խաւար երկիրներ ընկող հայոց գործ է) որ աղքատներու սիրահար տեսակէն—թէ երբէք կրնայ գտնել—մարդ մը անմիջապէս Եսթրախու ձեռնադրելով մեքերից ճամբէ: Այն ատեն թերևս նիհար ոչխարները քիչ մը խոտ գտնեն ուտելու...

Նոյ. 26, Պոսթոն

ԱՐԱՄ

ՊՕՍԹՈՆԻ ՀԱՅԵՐԵՆ ԵՒ ՍԱՐԱՃՅԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ

Պոսթոն, Դեկտ. 4.

Բանի մը որ ստաջ Մաշտոց վարդապետի անունով շրջաբերական մը ցրուեցաւ հոս ևւ շրջակայները, որով կը յայտարարուէր թէ Սարաճեան սրբազանը Ուրբաթ կէսօրին Պոսթոն կը չ'անի, և կը հրաւիրէր փափաքողներ որ դիմաւորեն Սրբազանը, Հակառակ սորո՛ միայն երկը անձինք հաճած էին կայարան երթալ և կ'սկսուէր ընդ առաջ, թէ և կէսօր ինչեղով թէ ուղիքն շատեր կրնային երթալ: Սրբազանն ալ իր կողմէն—թերևս վրէժ լուծելու նպատակաւ—«Էջ յԱւթիւն և բազմեցաւ յօթէլ» ոչ հայ տուններ ոչ ալ ճաշարաններ պցելից:

Այսօր թրինթի մատուռը գնացինք սրբազանը լսելու. չորս հարիւր հայեր կային հոն, մեծ մասը հետաքրքրութեան համար եկած: Բարոյի սպաւորութեան մասին բան չեմ ըսեր, վասն զի ամէն մարդ իր ճաշակն ունի այդ մասին: Իսկ ընդհանուր առմամբ կարելի է ըսել թէ Սրբազանը հոս ընդունելութիւն չ'ը գտաւ. իբրև ապացոյց՝ յիշենք թէ Ուսթրիլ եկեղեցւոյ պարտուց համար բացած հանգանակութեան գումարը ԲՍԱՆ և ՈՒԹ տուար եղաւ:

\* \* \*

Երեկոյեան ալ Դաշնակցականներ ժողով ունէին, հոն այ գացինք: Անձրի պատճառաւ շատ ժողովուրդ եկած չէր. բայց ժողովն շատ եռանդուն էր: Այս ժողովին եկողներու թիւը եկեղեցի գացողներուն մէկ երրորդը հազիւ կար. հանգանակութիւն մ'ըրին, և յաջողեցան յ85-60 գտնածել:

Պոսթոնիցին յեղափոխական է ուրեմն:

\* \* \*

ՀԱՅՈՒ ՄԸ ԹՎՈՒՄՈՒԹԻՒՆԸ

Իրաւին ինչե՛ր շքանք աշխարհի մէջ. սէրն անգամ կը գնէ: Անցեալներ հոս հայ մը ամուսնացաւ Հրէայ աղջկան մը հետ: Պիտի ըսէք սէրն ազգութիւն չ'ունի. կ'ընդունիմ, բայց սիրային արկած մը չէր, այլ դրամական նկատումը: Փութամ ըսել թէ հայն թրփատուեցաւ ամուսնանալէ առաջ: Կը լսեմ թէ շատ մեծ շքով կատարուած է թրփատութեան արարողութիւնը՝ ինքրկայութեան 600 հրէից: Այս հայն որ Ձոյիկ կը կոչուի, պտղոյ և շաքարեղէնի խանութ մը ունի Գոլոմպոս պողոտայի վրայ: Հրէուհին Ձոյիկի գործատրն էր և կըսուի թէ բաւական դրամ ունէր, և թէ գործուն մէջ ժրաջանութիւն ցոյց կուտար. հետեւաբար Ձոյիկն խորհեցաւ նիւթապէս օգտուիլ և թրփատուեցաւ:

Պոստ մէջ հրէուհին կը հայանան, իսկ հոս հայն կը հրէանայ: Գիշ մը զարմանալի չէ՞:

ԱՊՏԱԿ

ԻՄ ՈՒՆՏՍ

Իմ Հայրենիք վայր խնկելի, Վրէժներու մէջ հիւժի մաշի. Իւր դարեկոր վսեմ փառքեր, Վասին ձեռքն են միջնցեր:

Բայց ես կ'ուխտեմ մշխարհի դէմ, կամ քեզ թագ տալ կամ իմ կեանք տալ:

Իմ Հայրենիք Աստուածածնի, Երբէք զքեզ մոռացած չեմ. Ես պատանի մ'եմ անձնուէր, Իմ մատաղ կեանք քեզի տուէր:

Բայց ես կ'ուխտեմ Ով սուրբ Եղէմ, Քեզ Հային տալ կամ իմ կեանք տալ:

Իմ Հայրենիք չքնաց շուշան, Գլուխն ի կոր ի Եսաւարջան. Աչքն խոնարհ արտասուաքին, Կը հեծեծէ դառն վշտագին:

Բայց ես կ'ուխտեմ Սրբել բուժել Ձիւր դառն վշտեր Եւ արցունքներ:

Իմ Հայրենիք վայր դիւցազանց, Արդ ոտնակոխ ազգաց ազանց. Դաժանին սուրն չէ խնայեր, Հայ մանկուոյն կեանքն է հնձեր:

Բայց ես կ'ուխտեմ Արեգին դէմ, կամ քեզ կեանք տալ կամ իմ կեանք տալ:

Իմ Հայրենիք զո՞հ կենդանի, Ծով արեան մէջ կը թաւալի. Դարեր անհոգ եկան անցան, Բուժել զիւր վէրք գուժ չ'ունեցան:

Բայց ես կ'ուխտեմ Երկինքի դէմ, Ձիւր վէրք բուժել կամ կեանք տուժել:

Իմ Հայրենիք վրէժ ինչեղէ, Արեան փոխան արիւն կ'ուզէ. Հայ սերնդի վրէժի հոգին, Պէտք է լուրջ մէջ արևելին:

Բայց ես կ'ուխտեմ Աստուծոյ դէմ, կամ վրէժ լուծել կամ կեանք տուժել:

Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Յ Ի Ն ԱՆԴՐԱՆԻԿ ՄԵՍ ԺՈՂՈՎ ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ Դ Ա Շ Ն Ա Կ Ց Ո Ւ Թ Ե Ա Ն

Եսթրախ երկրոյ, Դեկտ. 10, Ժամը ճիշտ 7 ձին Գրամբրսի Լայսիլըմ՝ շքեղ սրահին մէջ, թիւ 117 Ուէսթ 23րդ փողոց, Երբ Ալլ. անկիւնն

Դաշնակցութեան նիւ Եսթրի Կոմիտէն պատիւ ունի ծանուցանել թէ իր անդրախիկ հրապարակային ժողովը պիտի ունենայ յիշեալ բանին մէջ: Կոմիտէն ամեն ֆանք ի գործ դրած է՝ կարելի եղածին չափ փայլուն և հրահանգիչ ընել ժողովը, որուն պիտի ատենապետէ Տ. Ե. Տէր Ստեփանեան:

Կոմիտէն յարկանք կը հրաւիրէ նիւ Եսթրի և շրջակայից բոլոր հայերն՝ այր և կին՝ ներկայ գտնուիլ այս ժողովին, որոյ ճոխ յայտագիրն ու ծանօթ խօսողներն գրաւական են արդէն ժողովի յաջողութեան համար:

Հ. Ե. ԴԱՇ. ՆԻՒ ԵՈՐԲԻ ԿՕՄԻՏԷՆ Ե Ա Յ Տ Ա Պ Գ Ի Ի

1. Յեղափոխական Բայրիկը, «Տո՛ւր ձեռք».
2. Ուժերու Համագրութիւն (Դրօշակ), Տ. Մ. Միտասեան.
3. Երգ.
4. Արտասանութիւն. «Տակաւին Ապրիլը» Օրիորդ Մարի Մըլըրիան.
5. Բանի մը խօսք, Տ. Մարգարեան.
6. Աստուածութիւն, Ա. Լևոնեան (Պոսթոնէն)
7. Երգ.
8. Աստուածութիւն, Թ. Չարչաֆճեան.

ԲԱԳՐԵՒԱՆԴԻ ԿՈՌԻԻ ՄԱՍԻՆ

Սեպտեմբերի առաջին օրերուն մէջ արիւնահեղ կռիւ մը տեղի ունեցեր է Բագրեւանդէն գաղանի անցնող մեր զինակիր խումբերէն մէկուն և Բագրեւանդէն միջև:

Ստոյգ տեղեկութիւններ ստացած չենք սակաւին մեր ընկերներէն: Ուստի կամայ ակամայ հարկադրուած ենք առ այժմ շատանալ կռուի դաշտէն եկող Բագրեւանդէն գաղանի մը պատմանով, որը կը փութանք հարազատել ձեզ՝ երկուստեք կորուստի մասին ամէն վերապահովով:

Այդ խումբը Բայազետի Այնթար գիւղին մօտերը կը հանդիպի 6 զինուած Բագրեւանդէն իւր ներկայութիւնը մատնել չի տալու համար, քէ գայինքը հարկադրուած էին սպաննել ասոնք: Բագրեւանդէն չորսը կ'իյնան, բայց երկուքը կը յաջողին փախչիլ ու խուճապ ձգել շրջակայքը:

Հայ ֆէդայիները երևալու լուրը սանկուտայ կ'ընէ մերձակայ Բագրեւանդէնը: Քիչ ժամանակի մէջ խառնիճազանձ հոծ բազմութիւն մը Բագրեւանդէն, համաբնից, զինուոր — լրացրել Բագրեւանդէն ըսելով 1,500 2,000 հոգի — կ'առաջարկէ Այնթար, ֆէդայիներուն առջևը կարնու:

Փայտուտի ճամբանին կտրուած — յանկարծակիի գալերնուն — մեր խումբը այդ մը կ'ապաստանի, ուր պաշարուած կը մնայ 3 օր:

Թշնամին, հակառակ իր թուով առաւելութեանը, չի համարձակիր գրուն տանել այրին վրայ: Բագրեւանդէն պատերազմական խորհուրդը, երկար վիճարանութենէ ետք, խոհեմութիւն կը համարի բանակցութեան մտնել պաշարուածներուն հետ և առաջարկել անձնատուր լինել իրենց: Իսկույն բերել կ'ուսան Բագրեւանդէն Ս. Յովհաննէս վանքին վանահայրն և կ'ստիպեն զինքը որ անձամբ տանի այդ առաջարկը և իր կողմէն աջակցութիւն ֆէդայիները:

Ասոնք յանդիմանելով վանահայրը Բագրեւանդէն առաջարկը ընդունելուն, կը պատասխանեն.

— Բագրեւանդէն կ'ուզեն մեր հրացանները ստանալ, թող գան մեր ձեռքէն ասոնք:

Վանահայրը ետք ճամբելէն ետք ֆէդայիները դուրս կը խուճեն այրէն:

Կ'սկսի կատաղի կռիւ մը: Բագրեւանդէն պատմելով, հայերը իրենց բազմազարուածեան մօտիններով հրաշքներ կը գործէին, մինչդեռ Բագրեւանդէն մէկ-մէկ միայն կըրնային արձակել:

Թշնամին բազմապատկիւր տեսնելով, ֆէդայիները մարդ կը զըրկեն Սերօրին իմացնելու իրենց տագնապալի կացութիւնը և օգնութիւն խնդրելու անկէ: Սերօրը տունը չի գտնուիր այդ միջոցին, ուստի իր կիներ առանց ժամանակ կորսնցնելու, Սերօրի խումբը մօտ 200 հոգի — և կը փութայ կռուի դաշտը, ուր քիչ ետքը Սերօրն ալ կ'ուզայ կը հասնի:

Նոյն ատեն Բագրեւանդէն ալ կը դիմեն Բագրեւանդէն փաշային, թնդանութիւնը խնդրելով անկէ, բայց մերժում կ'ստանան:

Կռիւը կը վերջանայ ֆէդայիներու նահանջով:

Հայերը կը կորսնցունեն 43 հոգի. երեք վիրաւոր ալ գերի կը բռնուուն:

Բագրեւանդէն կորուստը մօտ 300 հոգի կը հաշուուի:

Թուրք պաշտօնական աղբիւրներ այդ ֆէդայիները Մուշի, Բուլանըլի, Ուլաթի և Առձէշի բնիկներ կը

համարին. սպանուած կը հաղորդեն 55 հոգի, երեք ալ վիրաւոր: Իսկ Բագրեւանդէն կորուստի մասին պերճաբան կերպով կը պատմանին:

(ԴՐՕՇԱԿ)

Մ Ա Ն Ր Ա Ն Ա Ռ Ի Ր Ք

Նոյեմբեր 30ի գիշերն Պոսթոնէ Փորթլընտ ճամբորդող Փորթլընտ անուն շոգենաւի 144 ճամբորդներուն մէջ, կը լսենք թէ հայ մը կայ եղեր Գրիգոր Աղամբան անուն: Այս դժբաղդ անձը թերևս աւելորդ է ըսել թէ բազմակից եղեր է իր ճամբորդակիցներուն, որք ծովամայն ընկողմած էին յիշեալ շոգենաւին հետ:

Պայտլընէ կը լսենք թէ տեղւոյն Ալեքսանդր փողոցի գիշերային վարժարանի Հայ աշակերտաց դասատուն Տ. Ա. Սէլեան իր ստացած շարժականէն 2 ստլար տեղւոյն Որբախնամ ընկերութեան յատկացուցած է:

— Լօրէնի մէջ 16 ամիսներ առաջ Չնքոյ և Առաշի Ուսումնասիրաց անուն ընկերութիւն մը կազմուած էր, որուն անդամակցած էին 40 ի չափ ազգայիներ: Այս ընկերութիւն, կազմուածէ երկու ամիս վերջ՝ նախակըրթարան մը բացաւ յԵրևան, ուր երեք դասատուներ կ'ուսուցանեն այժմ խեղճ ու որը աղայոց: Նամուկէ մը կը լսենք թէ այս ընկերութիւնը վերջերս դիմում ընելով Հայ գրադարանաց՝ գրքեր խնդրած էր իր յիշեալ վարժարանի համար, և թէ վենետիկի Միքայելովի անունով շոգենաւի իր նուէրներով քաջակերել այս բարեկամութիւնը անարկը, որ արժան է ամեն հայու նիւթական և բարոյական աջակցութեան:

— Էլի քոյրերը պատասխանած են թէ այն խառնազոյր որ վերջերս Հայ անուամբ յաղողած էր դարձ կորզել իրենցմէ, հաւանականաբար հայ չէ:

— Պատմութիւն հետեւալը կը գրենք Կ. Պոլսոյ Բիւզանդիոնի մէջ զարթոյն կողմից մէջ զարթոյնական նոր դրութեան բերմամբ գրաւուած կալուածներուն արժէքն հինգ միլիոն րուպլիէ աւելի է: Հետեւալէս, Բիւզանդիոնի մէջ նախապէս հրատարակած հաշիւները պակաս է: Ես անձամբ գիտեմ, Տիգրիսի մէջ միայն Յովհաննէս դպրոցին մէկ կալուածը կայ, վարացիներուն մեծ մայր — եկեղեցւոյն, այն է՝ Սիօնի եկեղեցւոյն դիմացի կարգը, որ Ղալաթիոյ նախորդ կեդրոնական վարժարանին պէս չ'ընեմ չորս, բայց երեք վարժարան հանգիստ կրնայ պահել: Այս կալուածը շինած էին Յովհաննէսը և իրենց դպրոցին յատկացուցած, — ահագին քարավանսէրայ, ուր մեծ վաճառականք կը բնակին: Բայց որովհետեւ Յովհաննէսն օրիորդական վարժարանն «աշխարհական» հաստատութիւն մ'է եղեր, այդինքն՝ եկեղեցիի մը կից, եկեղեցիի մը սեպակական շէնք չ'է. ուստի անիկա կը գրաւուի և ամէն ազգէ աղջիկներու համար քաղաքային հաստատութիւն մը կ'ըլլայ, անոր յատկացուած կալուածն ալ:

— Անցեալ Ծարաթ երեկոյ ազգային ընդհանուր ժողովոյ մէջ, ուր ներկայ էին իրր 100 անձինք՝ նոր հոգաբարձութեան ընտրութեան համար, եռապատիկ ընտրելաց ցանկ մը պատրաստելու պաշտօնով յանձնախուճ մը ընտրուեցաւ հինգ անձերէ բաղկացեալ, ասոնց յանձնուեցաւ նաև գերեզմանատուն մը գնելու ծանօթ խնդրը:

— Ճ. Ալախան, որոյ համար անցեալ շաբթու ըսուած էր թէ իր լանտացիներէ գանակոծուած էր, մեզ

կ'իմացնէ թէ սխալ է այդ լուր, զի ինք ու է անձէ գանակոծուած չէ:

— Բագրեւանդէն Սիւնիք Որբախնամ Ընկերութիւնն վերջերս 30 ոսկի զըրկեց Ս. Պատրիարք Հօր՝ Վանայ Ս. Գրիգոր վանքին մէջ պահուելիք քրտան Կիլիկիոյ եռամսեայ ծախուց համար: Ս. Պատրիարք Հայրը որոշած է որ նոյն վանքի եկամտի մէկ մասն ալ մեր Որբախնամ Սիւնիք 20 որբերու ծախուց յատկանայ:

— Այն երեկոյ քաղաքիս Գաշնակցական կուսակցութեան կոմիտէն հրապարակային ընդհանուր ժողով մը պիտի ունենայ Գրամբուի Լայսիլըմի մէջ, ուր պիտի խօսին Տիարք Լևոնեան (Պոսթոնէն), Մարգարեան և Չարլաֆճեան:

— Չէշթուրի հանդիսին յարմար նուէրներ գնելու համար դիմեցէ՛ք հետեւեալ տուններուն.



AMIN MERHIGE & Co.

29 BROADWAY, NEW YORK, Room 212

ՄԵՆՍԻՍԱՆԿ (Հօլլանդ) ՎԱՃԱՌԱԿԱՆՔ

Արևելեան և Տաճկական Ապրանքաց Այլ վաճառատունն իր տեսակին մէջ ամենամեծն է ի նիւ Եորք: Հոն կը վաճառուին ամեն տեսակ ասեղնազործներ, քարեղանի, մէնթըլի, փիւնայի ևն. մետաքսեան և ոսկեթել ծածկոցներ, Դամասկոսի վարաքոյրներ, Բերիսի աղապանի, քէֆիա, ևն. ևն.:

Հայ վաճառականք կը հրաւիրուին փորձել միանգամ: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք փութով և խնամօք կը կատարուին: Գրենք չափաւոր և ապրանքներն լաւագոյն լինելով՝ ուրիշ ո'ւ է տուն չէ կարող մրցիլ այս տան հետ:

S. & N. D. MERHIGE & Co.

92 WASHINGTON ST., NEW YORK.

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ք

Հին և նոր ամէն տեսակ զէնքերու, Գաղղլական գոհարեղէններու թէ՛ իրական և թէ՛ նմանութիւն: Կը վաճառուին արևելեան և տաճկական ամէն տեսակ ասեղնազործներ, սեղանի, դաշնակի, մէնթըլի, ևն. ծածկոցներ ոսկեթելով մետաքսակալու: Դամասկոսի մետաքսէ և մանածէ վարաքոյրներ, Հալէսի աղապանի, քէֆիաներ ևն.:

Հայ անհատներ ինչպէս նաև Հայ Կոմիտէականք ու վաճառականք երբ պէտք ունենան այս կարգի ապրանքներու, 10 առ 100 շահելէ գատ, գոհ պիտի մնան այս ծանօթ վաճառատունէն գնելով: Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք ճշտու կը կատարուին:

ՀԱՅ ՅԱՃԱՌԱՌՆԵՐՈՒՄ

Կը ծանուցանեմ թէ ի դիւորութիւն՝ դեղարանի նախկին տեսուչը Պ. Ստեփանեան ամէն երեկոյ ժամը 6էն մինչև 8 պիտի ծառայէ իր հարկանակիցներուն:

Պատիւ ունիմ ըսել թէ ասկէ վերջ Ուինտըր Հէր վիկըր՝ անուն հրաշալի մազի դեղը պիտի ծախենք շէշթ 50 ոսկի: Հմուտ բժիշկներ կը վկայեն թէ իր տեսակին մէջ լաւագոյն է մազերը զօրացնելու, բու-

ժելու և նախնական գոյնը պահպանելու համար:

Տակառ մը զուտ Նորվեգիական ձուկի իւղ բերել տուած եմ, որոյ լիւրան 45 սէնթի պիտի ծախենք:

Դեղագիրներն կը պատրաստուին ատան և թարմ դեղերէ: Փորձեցէ՛ք: ՈՒՆՍՏՐՐ ՏՐԸԿ ԸՍԹՕՐ,


Մաքս Հանսպըրկ 472 3րդ ափսիւ, Նիւ Եորք:

TURKISH GEMS,

Նասրէտտին Հօճային մէտէլներուն Անգղիերէն կոկիկ թարգմանութիւնը՝ Հանդերձ Հօճային պատկերով, մաքուր — ապագրութեամբ քրքոյկի մը վերածած եմ, սրն ւր Ամերիկացի և այլ բարեկամաց նուէր տալու շատ յարմար է: Գինը 25 սէնթ է, զրկելու ծախար վրաս:

Դիմել — Պատ. Ս. Վ. Պէտրիկեան, Rev. S. V. BEDICKIAN,

276 Ridge Ave, ALLEGHENY, PA.



ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳԻՏԱՐԱՆ

9 րորդ Տպագրութիւն

Մաքուրէլ Սըմբըլիւ

Հրատարակիչ

Կը բաղկանայ 25 մեծադիր հատորներէ, որք կը վաճառուին բաժանորդագրութեամբ միայն:

Սոցա գինն է, Կտակեայ կազմ՝ 62 տոլ. 50 սէնթ, Կէս կաշիակազմ՝ 87 " 50 " Փառակազմ՝ 100 "

Առաջին տեսակէն կը զրկուի ասոնց որք յանձն կանեն վաճառել ամիսը 2 տարի 50 սէնթ: Երկրորդին ամսավճարն է 3 ու կէս տոլար, իսկ վերջինին՝ 4 տոլար:

Այս Համագիրտարանն Ամերիկեան միակ արտօնեալ ապագրութիւնն է. մնացեալք անկատար են ամեն կերպով: Մանրամասնութեանց համար դիմել խմբագրութեանս:

ՊԱՍՏԱՍԽԱՆՆԵՐ

Ճ. Ճ. Ֆիլատէլֆիա — Չեր դրկած դրամը առած ենք:

Ժ. Գ. Ֆիլատէլֆիա — Նոյն:

Ճ. Պ. Պ. Ընթէլիւն — Չեր բաժանորդագրին լրացած էր 50րդ թուով:

Ս. Թ. Մանչեսթըր — Չեր պահանջը անտեղի է. ո'վ ըսու թէ այդ Սարգիսը դուք էք, կամ Տիգրիսի մէջ ո'ւր կարգացիք այդ մասին բան մը: Քաջ գիտնալու էք թէ մեր թղթակցաց և ո'չ մէկին անունը կըրնանք մատնել ո'ւ է պարագայի տակ:

Չեր սպանալիքը բոլորովին աղապական է. անոր վրայ կուշտ մը ծիծաղելէ գատ ուրիշ բան մը չենք կրնար ընել:

ՀԱՅ ՆԿԱՐԻՉ ՄԸ Ի ՆԻՒ ԵՕՐՔ

Այցելութեան մը համար, Փարիզէն քաղաքս եկաւ անցեալներն միականաւոր Հայ նկարիչ՝ Տ. Սարգիս Տիրանեան, որ 20 տարիէ իվեր Փարիզ հաստատուած ու մեծ համբաւ չա-

Համ է ֆրանսացոց մայրաքաղաքին մէջ: Այս Հայ նկարչի նշանաւոր պատկերներէն հինգը Գաղտնի կառավարութիւնն զնամ է: Իսկ միւսներէն շատեր կը գտնուին այլ և այլ թանգարաններու ու միւզէոններու մէջ: Տ. Տիրանեան պատուանշաններ ստացած է Փարիզի Սալոնէն և ուրիշ ցուցահանդէսներէ: Անդամ է քանի մը ծանօթ ընկերութիւններու: Ինք հռչակաւոր ժէրմանի աշակերտներէն է ու մասնագէտ՝ գիմանկարի ու մարմնանկարի մէջ:

ԱՐՓԻԱՐԻ ԽՆԴԻՐ

Մ. Յ. Ա. Ֆիշարիկէ կը պատասխանէ Պ. Լեոնեանի վարագոյրի ետեւը դատարկ կը գտնէ, և կը մտածէ թէ Դաշնակցականը նոյն ամբաստանեցին յենով ապացոյցներու քայց կրք ասեանի մ'առջև կանչուեցան՝ փախուստ առնին: Սակայն յոգևածագիրը սօզու մաններն կը պահանջէ, հոգ չէ եթէ անոնք խըմբադրութեան, կամ իսկի մը կամ անհատի մը քով ըլլան. «և մենք սոց-դոմին պահանջելու իրաւունք ունինք զանոնք», որ ընդ միշտ վախճան տրուի այս խնդրոյն, սա պարզ պատճառաւ որ այս խնդիրը պատրուակ բռնուելով՝ «Միութեան խնդիրը» երեսի վրայ մնացած է:

Կ. Գուրգէն Մանչէսթըրէ «Հուպա Դաշնակցականները» վերնագրով ընդարձակ նամակ մը կը գրէ, որով քանի մը Դաշնակցական գործիչներու քամահրելի արարքներն երևան կը բերէ: «Ես որ ներկայիս ո՛ր և է կուսակցութեան չեմ պատկանիր» ինծի խճճի պարտք համարեցի իմ անձնակից տեղեկութիւններու վրայ հիմնուած՝ կոչ ընել Դաշնակցական եղբարց որ քիչ մըն ալ աչքերնին իրենց կուսակցութեան վրայ դարձնեն և տեսնեն թէ արդեօք անոր մէջ եղող զեկաւորները ամենքն ալ երկինքէն իջնող սուրբն են: Անձամբ չըջած եմ Բարձր Հայքի, Կովկասի և Ատրպատականի մէջ ազատութեան Ս. դրօշի տակ գործելով, և հանդիպած եմ շատ մը թէ՛ անկեղծ և թէ՛ կեղծ գործիչներու: Ո՞վ Դաշն. եղբայրներ, քանի որ մասնիչներ փնտռելու ելիք էք, պարտիք անկողնակալ և քիչ մըն ալ ձեր իրեններուն վրայ նայիլ, յայտնում պիտի տեսնէք թէ՛ ապակեգործանցման շագանդուն անուան տակ ինչ զեկծ, խառնակ ու դաւաճան անձեր պահուած կան:

ՄԵՆ ԶԱՆԴԵՍ Ի ՆՊԱՍՏ ԶԵՅԹՈՒՆԻ

Տեղի պիտի ունենայ Կեկտեմբեր 17, Զարթով երեկոյ ժամը ճիշտ 8ին  
ԸՄՔԱՐԻՇ ԲԱՅԹ ԶՈՒՆ ՄԵՋ  
ՁԳՐ ԻՊՈՍՏ, Մատիսըն Ալիբեյ.  
Մտից գինն է 25 սէնթ. Օթեակնեներու գինն է 5 տարէ մինչեւ 10 տարու՝ ստիճանարար:

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Եզրուր Պաղտատարեան՝ հակառակ իմ համոթեան՝ զատ տուն մը կը բնակի: Ուստի կը ծանուցանեմ բոլոր ազգայնոց որ եթէ իմ անուամբ որ և է մին անոր փոխ տակ տայ, պաշտարանատու չեմ. և ես այսուհետեւ իր օրինակը կին չեմ ճանչնար գայն:  
Աւսթըր. ԿԱՍՐԱՐ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ


MARK C. MEAGHER,

St. Paul Building, No. 220 Broadway, New York City.  
ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿՍԼՈՒՍՈՒ ՄԵՆՍԳՈՅՆ ՆԻՒ ԵՈՐԳԻ ՄԵՋ

Շարաթական  
Լար վճարելով  
Մուսի տեղ ի Մուրէյ Հիլ Փարք, որ Մեծագոյն Նիւ Եորքի աշխարհագրական կեդրոնն է Ֆլըշինկի կից: Սա տեղը ծովի մակերեսէն 120 ոտք բարձրութեան ունի, ուր 34րդ փողոցի Ֆլորիէն Հիլի սէնթը կերթողի 19 րոպէէն:  
Այս Հողերը տեսնել փափաքողներուն երթևեկութեան համար ձրի ստեղ կը տրուի: Երթալ ուղղութեան անն Հինգշաբթի և Կիրակի օրեր, 4էս օրէ վերջ ժամը մէկ և 4էսին, ներկայ գտնուելու են Լոնկ Ասյըլեանի Ֆէրրիս առջև, իսկ 34րդ փողոց, ուր պիտի կրնան ստիճ ստանալ Տ. Ս. Եարաբեանէ, որը հասցէն է 298 Ուէսթ 12րդ փողոց:

\$1.00

միայն Մէկ տարու  
կրնա գնել մի  
տունի տեղ ի Մուրէյ Հիլ Փարք, որ Մեծագոյն Նիւ Եորքի աշխարհագրական կեդրոնն է Ֆլըշինկի կից: Սա տեղը ծովի մակերեսէն 120 ոտք բարձրութեան ունի, ուր 34րդ փողոցի Ֆլորիէն Հիլի սէնթը կերթողի 19 րոպէէն:  
Այս Հողերը տեսնել փափաքողներուն երթևեկութեան համար ձրի ստեղ կը տրուի: Երթալ ուղղութեան անն Հինգշաբթի և Կիրակի օրեր, 4էս օրէ վերջ ժամը մէկ և 4էսին, ներկայ գտնուելու են Լոնկ Ասյըլեանի Ֆէրրիս առջև, իսկ 34րդ փողոց, ուր պիտի կրնան ստիճ ստանալ Տ. Ս. Եարաբեանէ, որը հասցէն է 298 Ուէսթ 12րդ փողոց:



\* \* \* \* \*  
Բնակութեան համար վայր մընէ փարք, որուն գեղեցիկ անտառապարտիկ եթէ մի անգամ այս վայր: Կան սարակաց ու անտառներ, երկրորդը \* \* \* \* \*

\* \* \* \* \*  
մար խոտ յարՄուրէյ Հիլ զեկի տեսարանը հրաշալի է զանգ համբոյց և լի Հիմայ հոն հաստական գրգռներ և այլն: \* \* \* \* \*

ՊՈՒԼՂՈՒՐԻ ՄԻՍՏԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹ.

BULGUR MANUFACTURING CO.  
151 Union St, WORCESTER, MASS  
Կը ծանուցանեն թէ երկարատե փորձառութեան շնորհիւ իրենց շինած պուրջուրը մեծ ընդունելութիւն զըտած է ամէն տեղ: Առանց քարի և անախտ հատի Պուրջուրը ամէն հոյտունէ կը փնտռուի: Մինք, որ միակ Պուրջուրի գործարանն ունինք այս քաղաքի մէջ, մեր բոլոր ժամանակը տուած ենք անոր յաջողութեան համար: Մեր յաճախորդը եթէ զոն չի լինին մեր ապրանքներն զրաննին ես կը արուք թէ և ցայսօր ոչ մի հայ ազգոջութիւն յայտնած է: Մեզ համար կը վկայեն հոյ տիկիները:  
Պուրջուրի լրացան կարծէ 3½ սէնթ խանութներու և ճաշարաններու համար. իսկ տուններու համար 4 սէնթ: Յանձնարարութիւն ճշդիւ կը կատարուին: Փոխադրութեան ծախքը գրեթէ զրոյն վրայ է:

ԺԱՄԱԳՈՐԾ

Կը նորագեմ ամէն կարգի ժամացոյց, գրեթէ ամառային գներով. մեզ գիմողները զոն են և պիտի մընան. գիմեցէք:  
Թիւ 159 իսկ 28րդ փողոց, առաջին յարկը: Ս. Մ. ԵՐԷՑԵԱՆ

Յ. Մ. ՆՈՒՄՐԻԿԵԱՆ.

Ա. Ռ. Ա. Ջ. Ա. Կ. Ա. Գ. Դ. Ե. Բ. Ջ. Ա. Կ.  
Թիւ 628 Յրք Ալիբեյ, Նիւ Եորք:  
Տեղեկանելու եւ ԵՐԲՈՂԱՆ  
Ընտիր կերպասեղէններէ վայելուչ հազուստներ կը շինէ գրեթէ ամառային գներով:

ՅԱՄՐ ԲՆԱԿԵԱՆ

Ամերիկեան և Արևելեան ընդհանուր Նպարավաճառ-Կրօքըրն,  
Թիւ 45 Էքսչէնջ փողոց, Ուսթըր:

Կը ծանուցանէ թէ գներու չափաւորութեան և նպարեղէններու ընտիր տեսակի մասին կը գերազանց ուրիշ նպարավաճառներն:

ՊՈՒԼՂՈՒՐ-ՊՈՒԼՂՈՒՐ-ՊՈՒԼՂՈՒՐ

ՊԱՂՏԱՍԱՐ ԹԱՇՃԱՆ ԵՒ ԸՆԿ.  
B. TASHJIAN & Co.,  
53 MAIN ST., BANGS COURT,  
WORCESTER, MASS.


Կը ծանուցանեն արգոյ հասարակութեան թէ իրենց փայտի գործը յաջողներէ վերջ հաստատուեցան զպուրջուրի և ծեծածի գործարան մը վերջնից անուան ասի: Այս գործարանի մէջ պատրաստուած ապրանքներն ոչ միայն զիրարմատելի գներով կը վաճառուին, այլ և մարքութեան ու պետական կողմէ անհամեմատ քանակութեան արգոյ հասարակութեան թէ իրենց փայտի գործը կամ մտնը պուրջուրի փառանք կարծէ 3 սէնթ, իսկ տուններու համար 3½ սէնթ: Տուններու և ճաշարաններու համար գրեթէ իրեն տպու նպասակաւ որոշուած է մինչև 25 փառանք քանակութեամբ ապրանք վաճառել:  
Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք փութով և ճշդիւ կը կատարուին:  
Փորձեցէք անգամ մը և զոն պիտի մնաք:

Վճարումնին կանխիկ կըլլան: Ծանապարհի ծախքը գնալին վրայ է:

ԹԱՇՃԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՍԱՎԱՃԱՌ  
573-579 ԲԷՅՄՊՐԻՃ ԸՍԹՐԻԹ  
ԲԷՅՄՊՐԻՃ, ՄԱՍՍ.

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ իւր պատրաստած հացը թէ՛ գին և թէ՛ տեսակի մասին չէ կարելի գերազանցել: Ո՛չ կը փշրի և ոչ ալ թթու է: 1 փնտ, հացը 3 սէնթ միայն կարծէ: Միւր միշտ թարմ է ու գները գոհացուցիչ: Կը վաճառէ նաև անուխ, քարիւղ և վառելիք փայտ: Ունի առանձին ճաշարան մը կցած յիշեալ ճիւղերուն, ուր կը պատրաստուին ընտիր կերակուրներ. առատ և աժան: Մասնաւոր կտուր ունի փոխադրելու համար, խիստ աժան գներով:  
Փորձեցէք անգամ մը:



Ա. ԹՕՓՈՒԶԱՆ.  
ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ.

Թիւ 239 իսկ 26րդ փողոց, Նիւ Եորք.

Այս խանութին մէջ կը վաճառուին ամէն տեսակ կոշիկներ խիստ աժան գներով: Մեր հայրենակիցներէ փորձ մը միայն կը խնդրենք: Նոր ապսպրուած կոշիկներ կը կարենք ձևաւորել վայելուչ կերպով: Կը նորագեմ հին կոշիկներ չափաւոր գներով: Ուրիշ մը երթալէ յառաջ ինձ եկէք անգամ մը. եւ վստահ եղիք որ շատ գոհ պիտի մնաք: 239 իսկ 26րդ փողոց Սիւրսոյ կոշիկներ \$1.25է մինչև \$5.00  
Կանանց « \$1.25է « \$2.50  
Տղայոց և աղջկանց կոշիկներ \$0.50է « \$1.50

Հ Ի Ր Զ Օ Լ Ա  
ՄԱՋԻ ԴԵՂ



Կը զօրացնէ, Լի մաքրէ, կը փայլեցունէ մազերը: Թափելու կը գաղտնեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը:  
Միանգամ փորձել բաւական է սաղեղին արժէքը գիտնալու համար, որ արևելեան խոտերէ պատրաստուած է յոյժ հաճելի մի հոտով:  
Կը մախուր լոր գեղագործին. բուն քով:  
Կարելի է ստանալ նաև ՏԻԳՐԻՍԻ ընկերութենէն:  
Կը փառանուր նաև Տ. Յ. Բարակտի քով, թիւ 45 Էքսչէնջ րոթ-րիթ, Ուսթըր, Մասս:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆՑ ՄԱՍՍԻՆ

Նկատելով որ ամեն կողմերէ շատ մը բանաստեղծութիւններ կը շրկուին մեզ, և նկատելով որ ՏԻԳՐԻՍԻ մէջ՝ անեղոյ անձեկութեան պատճառաւ չենք կարող զանոնք հրատարակել, որոշած ենք՝ մեր ընդունեալ մայր ստանաւորներն՝ մեծաւ մասամբ՝ առանձին հատորի մը մէջ ամփոփել, պայմանաւ որ ամէն փափաքող անձ իր ստանաւորին համար հարկ եղած շարքիւ, և լէքթրթթթթթթ շինելու և տպագրելու ծախքերն վճարել յանձն առնէ կանխաւ:  
Հեղինակներն իրենց իւրաքանչիւր ստանաւորին համար մէկ կամ երկու օրինակ պիտի ստանան Լրատարակուած հատորէն՝ երբ լոյս տեսնէ: Այս հատորը պիտի անուանուի «Փողովրդական քնար»:  
Մանրամասնութեանց համար գըրել լրագրոյս խմբագրութեան:

ՏՊԱՐԱՆ ՏԻԳՐԻՍԻ

Այս տպարանի մէջ կը տպագրուին թէ՛ Հայերէն և թէ՛ Անգլիերէն լեզուաւ ամեն տեսակ այցեատմոյ, նամակագրութեան, հրատարակչի, շրջաբերականներ, տետրակներ ևն:  
Մեր գները գոհացուցիչ են. տըպագրութիւնն՝ մաքուր:  
Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք կը կատարուին փութով ու խնամով: